

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

### 1 Նկարում պատկերված է.



- 1) հորիզոնական
- 2) համադրման սանդղակ
- 3) լեռնագիծ
- 4) ռելիեֆի կտրվածք (պրոֆիլ)

### 2 Հյուսիսարևմտյան կողմի ազիմուտը հավասար է.

- 1) 45°
- 2) 315°
- 3) 180°
- 4) 135°

### 3 Երկու կետերի հեռավորությունը գլոբուսի վրա 3,7 սմ է, իսկ իրականում՝ 1850 կմ: Ի՞նչ մասշտաբ ունի գլոբուսը.

- 1) 1 : 5 000 000
- 2) 1 : 50 000 000
- 3) 1 : 50 000
- 4) 1 : 500 000

### 4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մարտի 21-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հարավային արևադարձի վրա:
- 2) Յուրաքանչյուր ժամային գոտուց արևելք ընկած գոտին 1 ժամով առաջ է նախորդից:
- 3) Արեգակի ճառագայթները նույն լայնության վրա տարվա ընթացքում միշտ նույն անկյան տակ են ընկնում:
- 4) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:

(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է (հաշվարկը կատարել 5°-ով).

77 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

78 Որոշել օդի ջերմաստիճանը լեռան գագաթին:

(79-80) Երկրի բնակչության թիվը 2 մլն է, բնական աճի գործակիցը՝ 20‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

79 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

80 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

75 Քարտեզում ՀՀ կլիմայի ո՞ր տիպն է նշված Ա տառով.



- 1) բարեխառն լեռնային
- 2) չոր խիստ ցամաքային
- 3) ցուրտ լեռնային
- 4) ձյունամերձ (խիստ ցուրտ) լեռնային

76 Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 690 000 ց, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 30 000 հա: Որքա՞ն կլինի միջին բերքատվությունը:

5 Երկրի խորքում բարձր ջերմաստիճանից ապարները վերածվում են գազերով ու ջրային գոլորշիներով հագեցած հրահեղուկ զանգվածի, որը կոչվում է.

- 1) մղանցք
- 2) խառնարան
- 3) մագմա
- 4) լավա

6 Տվյալ վայրին բնորոշ միանման եղանակների բազմամյա կրկնությունը կոչվում է.

- 1) օդային զանգված
- 2) ամպամածություն
- 3) մթնոլորտային ճնշում
- 4) կլիմա


7 Լավային հոսքից կամ լեռնալանջի փլվածքից գետի հունը փակվելու հետևանքով առաջացած լիճը կոչվում է.

- 1) հնահունային
- 2) մնացորդային
- 3) արգելափակման
- 4) խառնարանային

8 Ի՞նչ բարձրության վրա օդի ջերմաստիճանը հավասար կլինի  $+11^{\circ}$ -ի, եթե նույն պահին Արագածի գագաթին  $-4^{\circ}$  է (յուրաքանչյուր 1000 մ-ին ջերմաստիճանի փոփոխությունն ընդունել  $5^{\circ}$ ).


- 1) 1009 մ
- 2) 1000 մ
- 3) 1090 մ
- 4) 1900 մ

9 Նկարում հարթավայրի ո՞ր տեսակն է պատկերված Ա տառով.



- 1) բարձրավայր
- 2) սարահարթ
- 3) ցածրավայր
- 4) դաշտավայր

10 «Քամիների վարդում» հորիզոնի ո՞ր կողմից է ամենից շատ փչել քամին.



- 1) հարավարևելյան
- 2) հարավարևմտյան
- 3) հյուսիսարևելյան
- 4) հյուսիսարևմտյան

11 «Մայրցամաք — թերակղզի» գույգերից ընտրել սխալը.

- 1) Հյուսիսային Ամերիկա — Ֆլորիդա
- 2) Ավստրալիա — Քեյփ Յորք
- 3) Աֆրիկա — Սոմալի
- 4) Եվրասիա — Ալյասկա

12 Ճնապողգուլային հողերը բնորոշ են.

- 1) մերձարևադարձային գոտու սավաննաների և նոսր անտառների տարածման շրջաններին
- 2) հասարակածային խոնավ մշտադալար անտառների տարածման շրջաններին
- 3) բարեխառն գոտու խառն անտառների տարածման շրջաններին
- 4) բարեխառն գոտու լայնատերև անտառների տարածման շրջաններին

71 Բնական գազի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Եգիպտոսը և Թուրքիան
- 2) Լեհաստանը և Չեխիան
- 3) Նիդերլանդները և Իրանը
- 4) Ֆրանսիան և Գերմանիան

72 Հողերի էրոզիայի պատճառ կարող են լինել.

- 1) ագրոանտառաբարելավումը
- 2) քարամաքրումը
- 3) արոտավայրերի գերարածեցումը
- 4) աղակալած հողերի լվացումը

73 Մթնոլորտի աղտոտման մարդածին աղբյուրներ են.

- 1) փոշեհողմերը
- 2) հրաբխի ժայթքումը
- 3) ապարների քայքայումը
- 4) արդյունաբերությունը

74 Քարտեզում ո՞ր տառով են նշված բնակչության առավել բարձր բնական աճ ունեցող երկրները.



- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ

66 **ՀՀ կլիմայի վերաբերյալ ռ՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր դեկտեմբեր ամիսներին:
- 2) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):
- 3) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
- 4) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:

67 **ՀՀ բնակչության վերաբերյալ ռ՞ր պնդումն է սխալ.**

- 1) Ամենաբարձրադիր բնակավայրը Տավուշի մարզում է:
- 2) Բնակչության խտությունը մեծ է Արմավիրի մարզում:
- 3) Ազգային կազմով գրեթե միատարր երկիր է (մոտ 98 %-ը հայեր):
- 4) Բնակչության խտության ցուցանիշն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:

68 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ռ՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Արմավիր և Գյումրի քաղաքները:
- 2) Ալյումինի արդյունաբերության կենտրոնը Վանաձորն է:
- 3) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
- 4) ՀՀ էլեկտրակայանների հզորության կառուցվածքում առավել մեծ բաժին ունեն ջեկերը:

69 **Ի՞նչն ընդհանուր չէ Տավուշի և Վայոց ձորի մարզերի համար.**

- 1) Մասնագիտացած են հանքային ջրերի արտադրության մեջ:
- 2) Հարուստ են անտառային ռեսուրսներով:
- 3) Գերիշխում են ծալքաբեկորավոր լեռնաշղթաներն ու միջլեռնային գոգավորությունները:
- 4) Բնակչության մեծ մասն ապրում է գյուղերում:

70 **Հրազդան և Արարատ քաղաքների օդային ավազանի աղտոտման պատճառներից է.**

- 1) քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների արտանետումները
- 2) գունավոր մետաղաձուլական ձեռնարկությունների արտանետումները
- 3) մեքենաշինական ձեռնարկությունների առկայությունը
- 4) շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումները

13 **Այս սառը օվկիանոսային հոսանքը ձգվում է Աֆրիկայի հյուսիսարևմտյան ափերի երկայնքով և ունի հյուսիսից հարավ ուղղություն: Այն ողողում է համանուն կղզեխմբի ափերը: Ո՞ր հոսանքն է.**

- 1) Սոմալիի
- 2) Կանարյան
- 3) Ասեդի հրվանդանի
- 4) Լաբրադորյան

14 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Զիբրալթարի նեղուցը միացնում է երկու օվկիանոսների ջրեր:
- 2) Սուեզի պարանոցը միացնում է երկու մայրցամաք:
- 3) Կարմիր ծովը ողողում է երկու աշխարհամասերի ափեր:
- 4) Միջերկրական ծովը ողողում է երեք աշխարհամասերի ափեր:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Պասսատը տարվա ընթացքում իր ուղղությունը երկու անգամ փոխող քամին է:
- 2) Արևմտյան քամին արևադարձային լայնություններից դեպի բարեխառն լայնություններ փչող քամին է:
- 3) Մուսսոնը օրվա ընթացքում իր ուղղությունը երկու անգամ փոխող քամին է:
- 4) Լեռնահովտային քամիներն ակտիվանում են հատկապես տարվա ցուրտ կեսին:

16 **«Հարթավայր — աշխարհամաս» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Մերձատլանտյան դաշտավայր — Ամերիկա
- 2) Գվիանական սարահարթ — Աֆրիկա
- 3) Մեծ հարթավայրեր — Ասիա
- 4) Պադանի դաշտավայր — Ավստրալիա և Օվկիանիա


17 **«Գետ — վտակ» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Նիգեր — Շարի
- 2) Ամազոն — Մարանիոն
- 3) Վոլգա — Դնեստր
- 4) Միսիսիպի — Մուրբ Լավրենտիոս

18 **Լավրասիայի մասնատումից առաջացած պլատֆորմ է.**

- 1) Աֆրիկա-Արաբականը
- 2) Հարավամերիկյանը
- 3) Չինականը
- 4) Հնդկականը

19 Քարտեզում Դ տառով ո՞ր գետն է նշված.



- 1) Ամազոն
- 2) Պարագվայ
- 3) Պարանա
- 4) Օրինկո

20 Քարտեզում Ը տառով ո՞ր պետությունն է նշված.

- 1) Ուրուգվայ
- 2) Պերու
- 3) Բոլիվիա
- 4) Կոլումբիա

21 Այն երևույթը, երբ բնակչության մահացությունը գերազանցում է ծնելիությանը, առկա է բնակչության նեղ վերարտադրություն և բնակչության թվի նվազում, կոչվում է.

- 1) ժողովրդագրական ճգնաժամ
- 2) ժողովրդագրական արտահոսք
- 3) ժողովրդագրական իրավիճակ
- 4) ժողովրդագրական պայթյուն

62 Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության թվով ամենամեծ քաղաքը Անկարան է:
- 2) Առավել խիտ են բնակեցված երկրի արևելյան շրջանները:
- 3) Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը:
- 4) Բնակչության թվով երկրորդ ազգը պարսիկներն են:

63 Բնութագրումով որոշել պետությունը.

*Այս պետությունն աշխարհի առաջատարներից է նավթի արդյունահանմամբ և արտահանմամբ: Բնակչության մեծամասնությունը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը: Երկրի ներքին շրջանները բնութագրվում են չոր մերձարևադարձային ու արևադարձային կլիմայով: Աշխարհի առաջատարներից է ոչխարների և այծերի գլխաքանակով: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Սաուդյան Արաբիան
- 2) Իրանը
- 3) Թուրքիան
- 4) Իրաքը

64 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Միջնաշխարհում տեղումների միջին տարեկան քանակը 400–500 մմ է:
- 2) Միջլեռնային գոգավորություններում ամռանը հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն:
- 3) Բարեխառն օդային զանգվածները Հայկական լեռնաշխարհ են թափանցում արևմուտքից:
- 4) Հայկական լեռնաշխարհում տեղումների առավելագույն քանակը թափվում է Արևելապոնտական լեռների հյուսիսսահայաց լանջերին՝ 2000–3000 մմ:

65 Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ալպ–Հիմալայան գեոսինկլինալային գոտում է:
- 2) Հարավում տարածվում է Կուր–արաքսյան դաշտավայրը:
- 3) Հարավ–արևելքում սահմանակցում է Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակին:
- 4) Զբաղեցնում է մոտ 29 հազ. քառ. կմ մակերես:

56 Հյուսիսային Ամերիկայի մերձարևադարձային գոտու Խաղաղօվկիանոսային ավերի կլիման.

- 1) միջերկրածովային է
- 2) մուսսոնային է
- 3) չոր մերձարևադարձային է
- 4) խոնավ մերձարևադարձային է

57 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աֆրիկայի ամենախոնավ շրջանը Դրակոնյան լեռների հյուսիսարևելյան լանջերն են:
- 2) Աֆրիկայում ամենաբարձր ջերմաստիճանը (+58,1°) գրանցվել է հասարակածային գոտում:
- 3) Կլիման ջարձոն գործող հրաբուխ է:
- 4) Կապի և Դրակոնյան լեռները հին, քայքայված լեռներ են:

58 Ո՞ր շարքի գետերն են հոսում հարավից հյուսիս ուղղությամբ.

- 1) Դանուբ, Կուր, Ամուր
- 2) Օբ, Ենիսեյ, Լենա
- 3) Դնեպր, Վոլգա, Մեկոնգ
- 4) Ինդոս, Եփրատ, Գանգես

59 Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.

- 1) Նիգերիան և Կոնգոն
- 2) Իտալիան և Ճապոնիան
- 3) Բանգլադեշը և Հնդկաստանը
- 4) Կամերունը և Պակիստանը

60 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Քրիստոնյաների մեծ մասը կաթոլիկներ են:
- 2) Հնդկաստանի բնակչության մեծ մասը դավանում է բուդդայականություն:
- 3) Հինդուիզմը և սինտոիզմը ազգային կրոններ են:
- 4) Իրանի բնակչության մեծ մասը դավանում են իսլամի շիա ուղղությունը:

61 Ածուխ արդյունահանող առաջատար երկիր է.

- 1) Պակիստանը
- 2) Աֆղանստանը
- 3) Հնդկաստանը
- 4) Բանգլադեշը

22 Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական, մշակութային և ինքնության զգացողության ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է.

- 1) միգրացիա
- 2) ազգերի միաձուլում
- 3) վերարտադրություն
- 4) ազգային համախմբում

23 Բնութագրումով որոշել երկիրը.

*Այս երկիրը նախագահական հանրապետություն է: Այն ցամաքային կապող օղակ է Պիրենեյան թերակղզու և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Հարուստ է ուրանի պաշարներով, որի շնորհիվ էլեկտրաէներգիայի զգալի մասը արտադրվում է աեկներում: Ո՞րն է այդ երկիրը:*

- 1) Գերմանիան
- 2) Իսպանիան
- 3) ՌԴ-ն
- 4) Ֆրանսիան

24 Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 10 մլն է, իսկ ամբողջ բնակչության թիվը՝ 25 մլն: Երկրի ուրբանիզացման մակարդակը կկազմի.

- 1) 25 %
- 2) 10 %
- 3) 50 %
- 4) 40 %

25 «Ժողովուրդ — կրոն» գույգերից ընտրել սխալը.

- 1) հրեա — բուդդայականություն
- 2) չինացի — դաոսականություն
- 3) թուրք — մահմեդականություն
- 4) իտալացի — քրիստոնեություն

26 «Պետություն — մայրաքաղաք» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Սերբիա — Զագրեբ
- 2) Թուրքիա — Ստամբուլ
- 3) Բուլղարիա — Բուդապեշտ
- 4) Լիտվա — Վիլնյուս

27 «Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
- 2) սինթետիկ մանրաթել — թեթև արդյունաբերություն
- 3) հաստոց — մետաղաձուլություն
- 4) պլաստմասսա — մեքենաշինություն

28 Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անդրիբանական գազամուղով երկիրը Եվրոպայից գազ է ներմուծում:
- 2) Երկրի հավատացյալ բնակչության 90 %-ը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը:
- 3) Աղքատ է վառելիքաէներգետիկ ռեսուրսներով:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:

29 Ժողովրդագրական պայթյունը բնորոշ է.

- 1) Ֆրանսիային և Գերմանիային
- 2) ԱՄՆ-ին և Կանադային
- 3) Նիգերիային և Ռուանդային
- 4) Ռուսաստանին և Ուկրաինային

30 Ունիտար պետություններ են.

- 1) Հայաստանը և Ճապոնիան
- 2) ԱՄՆ-ը և Ավստրալիան
- 3) Գերմանիան և ՌԴ-ն
- 4) Կանադան և Ֆրանսիան

31 «Պետություն — ջրաէլեկտրակայան» գույգերից ընտրել սխալը.

- 1) Բրազիլիա — Իտալպու
- 2) Բելառուս — Բրատսկ
- 3) Չինաստան — Երեք կիրճեր
- 4) ՌԴ — Կրասնոյարսկ

32 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ցորենի ցանքատարածությունների տեղաբաշխումը համընկնում է բրնձի ցանքատարածություններին:
- 2) Աշխարհում հացահատիկային մշակաբույսերին բաժին է ընկնում ամբողջ մշակվող հողատարածքների ավելի քան կեսը:
- 3) Աշխարհում թելատու մշակաբույսերից ամենատարածվածը վուշն է:
- 4) Նոր զարգացող երկրների գյուղատնտեսությունը զարգանում է ինտենսիվ ուղիով:

## Բ մակարդակ

51 Մեպտեմբերի 23-ին առավելագույն ջերմություն ստանում են.

- 1) հարավային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 2) հյուսիսային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 3) հասարակածային լայնությունները
- 4) հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնությունները

52 Երևան (արլ. ե. 44°30') և Իրկուտսկ (արլ. ե. 105°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.

- 1) 3 ժամ
- 2) 4 ժամ
- 3) 1 ժամ
- 4) 2 ժամ

53 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երևանի գոտիական ժամանակն առաջ է Տոկիոյի գոտիական ժամանակից:
- 2) Օրվա նույն ժամը կարող է լինել միայն նույն զուգահեռականի վրա:
- 3) Հս. լ. 66°30'-ից հյուսիս և հվ. լ. 66°30'-ից հարավ բևեռային գիշերների ու ցերեկների տևողությունը կրճատվում է:
- 4) Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտները (գետեր, քամիներ և այլն) իրենց սկզբնական ուղղությունից հյուսիսային կիսագնդում շեղվում են դեպի աջ, հարավայինում՝ ձախ:

54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ գուգորդումը.

- 1) բարեխառն մուսսոնային կլիմա — 600–800 մմ տեղումներ — սավաննա
- 2) արևադարձային կլիմա — 400–500 մմ տեղումներ — անապատներ
- 3) բարեխառն ծովային կլիմա — 800–1000 մմ տեղումներ — լայնատերև անտառ
- 4) մերձարկտիկական կլիմա — 200–300 մմ տեղումներ — տափաստան


55 Ո՞ր շարքի ջրային ավազաններն են պատկանում Հնդկական օվկիանոսին.

- 1) Ադենի ծոց, Կարմիր ծով, Դեղին ծով
- 2) Հարավչինական ծով, Պարսից ծոց, Բենգալական ծոց
- 3) Կարմիր ծով, Պարսից ծոց, Բենգալական ծոց
- 4) Բենգալական ծոց, Արաբական ծով, Դեղին ծով



49

Ո՞ր լեռնանցքն է քարտեզում նշված *Բ* տառով.



- 1) Ջաջուռի
- 2) Պուշկինի
- 3) Մելիմի
- 4) Սևանի

50

Ո՞ր էլեկտրակայանն է քարտեզում նշված *Ե* տառով.

- 1) Վանաձորի
- 2) Արզնու
- 3) Մեծամորի
- 4) Քանաքեռի

33

Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.

- 1) Քենիան և Եթովպիան
- 2) Իրանը և Սիրիան
- 3) Ավստրիան և Հունգարիան
- 4) Հնդկաստանը և Բանգլադեշը

34

Պողպատի արտադրությամբ առաջատար երկրներ են.

- 1) Հնդկաստանը և Պակիստանը
- 2) Կանադան և Բրազիլիան
- 3) Իտալիան և Իրանը
- 4) Չինաստանը և Ճապոնիան

35

Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասի մեջ չի մտնում.

- 1) Գեղամա լեռնավահանը
- 2) Արարատ լեռնազանգվածը
- 3) Կարսի սարահարթը
- 4) Սյունիքի բարձրավանդակը

36

«Գետ — հոսքի ավազան» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Եփրատ — Կասպից ծով
- 2) Արաքս — Պարսից ծոց
- 3) Տիգրիս — Կասպից ծով
- 4) Ճորոխ — Սև ծով

37

ՀՀ-ում ամենաշատ տեղումները լինում են.

- 1) խիստ ցուրտ (ձյունամերձ) կլիմայի տիպում
- 2) չափավոր շոգ կլիմայի տիպում
- 3) բարեխառն լեռնային կլիմայի տիպում
- 4) ցուրտ լեռնային կլիմայի տիպում

38

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ-ում հստակ արտահայտված է հյուսիսից հարավ փոփոխվող լայնակի կլիմայական գոտիականությունը:
- 2) ՀՀ-ում միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 3) ՀՀ-ում ամենաշատ տեղումները թափվում են Արփայի գոգավորությունում:
- 4) ՀՀ-ում կլիմայաստեղծ գործոններից են մուսսոնները:

39 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ-ում պտղաբուծությամբ զբաղվում են բոլոր շրջաններում՝ մինչև 2100 մ բարձրությունները:
- 2) ՀՀ ոչխարաբուծությունը հիմնականում տեղաբաշխված է նախալեռնային և լեռնային շրջաններում:
- 3) ՀՀ հողային ֆոնդի կառուցվածքում ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ բաժինը պայմանավորված է հիմնականում մակերևույթի լեռնային բնույթով:
- 4) ՀՀ գինու-կոնյակի արտադրությունը հիմնականում տեղաբաշխված է արտադրանքի սպառման շրջաններում:

40 ՀՀ տրանսպորտում բեռնաշրջանառությամբ առաջինն է.

- 1) օդային տրանսպորտը
- 2) գետային տրանսպորտը
- 3) երկաթուղային տրանսպորտը
- 4) ավտոմոբիլային տրանսպորտը

41 Ո՞ր լանդշաֆտն է գերակշռում Շիրակի մարզում.

- 1) ավայան և մերձավայան
- 2) լեռնատափաստանային
- 3) կիսաանապատային
- 4) անտառային

42 Կոտայքի մարզը արդյունաբերության ո՞ր արտադրությամբ հանրապետությունում առաջատար դեր չ/ի խաղում.

- 1) էլեկտրաէներգետիկա
- 2) պահածոների արտադրություն
- 3) հանքային ջրերի արտադրություն
- 4) ցեմենտի արտադրություն

43 ՀՀ-ում ո՞ր բարձրություններում է բնակչության միջին խտությունը ամենաբարձրը.

- 1) մինչև 1000 մ
- 2) 1500–2000 մ
- 3) 1000–1500 մ
- 4) 2000–2500 մ

44 Քաղցրահամ ջրի պաշարներով հարուստ է.

- 1) Ուզբեկստանը
- 2) Իրանը
- 3) Սաուդյան Արաբիան
- 4) Կանադան

45 Մթնոլորտի աղտոտվածության հետևանք չէ.

- 1) ջերմոցային էֆեկտը
- 2) ջերմաստիճանային շրջադասությունը
- 3) թթվային անձրևը
- 4) սմոգը

46 Ո՞րն է մթնոլորտի մաքրության պահպանման միջոցառումներից.

- 1) ջերմային էլեկտրակայանների թվի ավելացումը
- 2) կանաչ տարածքների ընդարձակումը
- 3) քիմիական ձեռնարկությունների թվի ավելացումը
- 4) ցեմենտի արտադրության ավելացումը

47 Հողաբարելավման միջոցառում(ներ) չէ(չեն).

- 1) քիմիական մելիորացիան
- 2) թեք լանջերի երկայնակի հերկումը
- 3) քարամաքրումը
- 4) հակաէրոզիոն միջոցառումները

48 Բնության այն տարրերն ու երևույթները, որոնք անմիջապես չեն օգտագործվում և սպառվում արտադրության գործընթացի ընթացքում, բայց կարող են ազդեցություն ունենալ դրա վրա, կոչվում են.

- 1) բնական պայմաններ
- 2) աշխատանքի միջոցներ
- 3) բնական ռեսուրսներ
- 4) արտադրողական ուժեր